

«1. Կենդանիների վարակիչ հիւսկանութիւնների մասին ընդհանուր հասկացողութիւն: II. Եղջիւրաւոր աւանտներին ժամատար: Գազմեց: Գ. Ղազարեան, Վաղարշապատ, դինն է 8 կոպ.:

Ժողովրդի մէջ գիտութեան լոյսը տարածելու համար կան զանազան միջոցներ. դրանցից մէկն է էփան և պոպուլեար գրքոյկների հրատարակութիւնը: Այս բանում մեզ մօտ ամենից շատ յաջողուել է բժշկական գիտութիւններին:

Պ. Ղազարեանի այս գրքոյկն էլ նուիրուած է անասունների բժշկութեան հարցին: Եթէ ի նկատի առնենք այն համազամանքը, թէ ինչ ահագին զոհեր են տանում մեղանում կենդանիների մէջ վարակիչ հիւսկանութիւնները, և որ ժողովուրդը չունի ամենատարրական հասկացողութիւն այդ հիւսկանութիւնների թէ պատճառների և թէ նրանց առաջն առնելու միջոցների մասին, կը հասկանանք, թէ ինչ ահագին նշանակութիւն ունեն այս գրքերը: Ինչպէս երևում է, պարոնը մտադիր է մի շարք գրքոյկներ հրատարակել կենդանիների վարակիչ հիւսկանութիւնների մասին: Յանկանում ենք պ. Ղազարեանին աջողութիւն և նրա գրքերի լայն տարածումը մեր ժողովրդի մէջ:

Այս փոքրիկ գիրքը, որի մասին մենք մտադիր ենք մի քանի խօսք ասել, ինչպէս ցոյց է տալիս վերև բերած վերնագիրը, ունի երկու մաս: Առաջին մասում հեղինակը տալիս է ընդհանուր գաղափար վարակիչ հիւսկանութիւնների, նրանց պատճառների, նախազգուշական միջոցների, բժշկելու, պատուաստումների և ախտահանման մասին: Իսկ գրքի երկրորդ մասում նա արդէն խօսում է այդ հիւսկանութիւններից ամենավտանգաւորի՝ ժանտախտի մասին:

Գիրքը կազմուած է պարզ ու հասկանալի լեզուով և առանց անտեղի երկարաբանութիւնների: Բայց և այնպէս զուրկ չէ մի քանի թերութիւններից: Օրինակ. յիշելով ախտահանութեան համար զործ ածուող նիւթերը՝ բաց է թողել մի շատ լաւ և էփան միջոց, այն է ծծումբ ծխելը: Մի ուրիշ տեղ (11 էր.) խօսելով մանրադիտակի մասին՝ նա ասում է. «Այդ գործիքը միջոց է տալիս տեսնել 50, 100, 500 և մինչև իսկ 1000 անգամ մեծացրած պարադիտներ»: Մինչդեռ յայտնի է, որ կան մանրադիտակներ, որոնք մեծացնում են մինչև 3000 անգամ: Իսկ 13 էր. ծանօթութիւնում ընդհակառակը՝ ուղեհալով հասկացողութիւն տալ ընթերցողին բակտերիաների զարգացման արագութեան և նրանց թւի մասին, ասում է, որ «մի բժշկի աւսելով, մի մարդ, որի մէջ բակտերիա է մտել, կը պոկի ջը»:

նեկու և առաւօտը կը զարթնի 1000 միլլիոն բակտերիա մէջը: Եւ եթէ այդքան բակտերիաներ շարենք իրար ետեւից, կը ստանանք մի թել 100 վերստ երկարութեամբ: Եթէ այսպէս ընդունենք, կը ստանանք, որ մի բակտերիան մօտ 100 միկրոն երկարութիւն ունի, մինչդեռ ամենահսկաները 30 միկրոնից աւելի մեծ չեն...

Չնայած մի քանի անճշտութիւններին՝ այս գրքոյկը պէտք է համարել շատ օգտաւէտ մեր ժողովրդի համար:

ԵՐ. ՍԱՐ.

Պ. Մանեգացցա՝ «Սիրոյ մեղեհը եւ նոցա ծագումը», հոգեբանական հետազոտութիւն. թարգմ. Երուանդ քահ. Նալբանդեան. Ալեքսանդրօպոլ, 1903, գինը 10 կոպ.:

Այդ մեծահնչիւն վերնագրի տակ թագնուած է 53 փոքր-բազիր երեսներից բաղկացած մի փոքրիկ գրքոյկ, ուր հեղինակի մի քանի վայրիվերոյ դատողութիւնների մէջ տղամարդկանց և կանանց փոխադարձ յարաբերութիւնների մասին չկայ հոգեբանական հետազոտութեան և ոչ մի նշոյլ: Հայ ընթերցողը ոչ մի կորուստ չէր ունենայ, եթէ Երուանդ քահանայ Նալբանդեանը նեղութիւն չքաշէր թարգմանելու այս գրքոյկը: Թարգմանութիւններ անելիս երբէք չպէտք է շլանալ այս կամ այն հեղինակի անունով. պէտք է ուշադրութիւն դարձնել միշտ գրքի արժանաւորութեան վրայ: Նշանաւոր հեղինակներն անգամ ունեն թոյլ և աննշան գրուածքներ, որոնց թարգմանութիւնը լոկ ժամավաճառութիւն է:

Ահա Ե. ք. Նալբանդեանի թարգմանութեան լեզուից մի նըմուշ. «Բնադաքակրթութեանը, որը անարգել գնում է աւելի յառաջ ու յառաջ, մենք, նորա այլ բարեարարութիւնների թւում, պարտական ենք դեռ և նրանով, որ նա ոչնչացրել է շատ ճանապարհներ և խորտակել է սէրը փաթաթող բաղմաթիւ շղթաներ»: Սա հայերէն բառերով զուտ ուռաերէն նախադասութիւն է: «Բանալու գիւտը իրենից յետոյ բերեց համարանալու (ՕՏՄԵԼԵԱ) գիւտը»: Ի՞նչ է նշանակում. այս կտորը կարող է հասկանալ գուցէ ինքը թարգմանիչը միայն և ոչ ոք աւելի: Բացի սրանից՝ թարգմանութեայն լեզուի մէջ տեղ-տեղ գործ են ածուած աղճատուած գաւառական բառեր, ինչպէս՝ թինգ տալ, ճուղքեր, քցել կայն:

Գրքոյի սրբագրութիւնը կատարուած է շատ անհոգ կերպով:

Ա. Մ.